

2613

244

7-30

1909

APM.
2-461a

2010

№ 17

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԲԵՐԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՆԲԵՐԵԿԵՆՈՒԹԻՒՆ
ԵՆԶԵՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՆՉՆՈՒՐԵՑՈՒԹԻՒՆ



Разсказы для дѣтей

Удовольствіе и неудовольствіе
Самолюбіе и самопожертвованіе

Изданіе редакціи журнала „Бари Луръ“.

Բ Ա Գ Ո Ր

Տպար. Ա. Ն. Թառաշեանցի եւ Լ. Գ. Միքայելանցի

Баку, Тип. А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ

1909

244
7-30

2010

2010

244
7-30

906

ԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պօղոս առաքեալն ասում է որ մենք. «միայն մեր անձերին հաճոյ չլինենք, այլ հաճոյ լինենք մեր ընկերին դէպի բարին՝ շինութեան համար» (Հռովմ. Ժե, 1—2): Այսինքն մենք պէտք է հաճոյ լինենք մեր շուրջը գտնվողներին՝ ոչ թէ անելով այն բանը որ ուղիղ չէ, այլ բարի օրինակ տալով, որով առաջնորդած կլինենք նրանց դէպի երկնքի ճանապարհը: Ի հարկէ նախ ինքներս գոհ և բաւական սիրտ պիտի ունենանք, որ ուրիշներն էլ մեր օրինակը տեսնելով՝ սովորեն գոհ և բաւական լինել:

Ենթադրենք թէ իրիկունը նստել ես և պատրաստում ես հետեւեալ օրվայ դասերդ: Իսկ պատուհանիդ տակ նստել է մի չար շուն և բուրբ ժամանակ հաչում է: Արգետք սա կը նպաստէ քո դասերը սովորելուն: Ոչ, ընդհակառակը, դա կը խանգարի և կը նեղի քեզ, դու չես կարող սովորել դասդ, մինչև որ շանը չ'փախցնես այնտեղից:



29339-63

Բայց հիմա ենթադրենք թէ պատուհանիդ առջև ծառի վրա նստել է մի փոքրիկ թռչուն և երգում է իր գեղեցիկ եղանակները: Ի հարկէ սա կը նպաստէ քո դասերդ սովորելուն: Եթէ լինենք անբաւական և վատ դրամադրութեան մէջ, մենք էլ այն պատուհանի տակ հաշող շան պէս կը նեղենք և կը տանջենք մեր շուրջը լինողներին: Բայց եթէ մենք սովորենք լինել բաւական, քաղցր և ուրախ, մենք այն երգող թռչունի նման իսկապէս ուրախութիւն կը պատճառենք մեր բարեկամներին, և նրանք մեր ներկայութեամբ կը զգան իրանց ուրախ: Հիմա մի քանի պատմութիւններով պարզացնենք այդ ճշմարտութիւնը:

Բաւականութիւն եւ անբաւականութիւն:

Ալֆրեդը և Պետրը եղբայրներ էին: Ձմեռը նոր սկսելիս հայրը գնեց և ընծայեց նրանց մի մի գոյգ չմուշկներ սառուցի վրա սահելու և խաղալու համար: Սաստիկ ցուրտ էր և նրանք յոյս ունէին որ հետեւեալ օրը իրանց տան առջևի լիճը բաւական ամուր սառած կը լինէր և իրանք կը կարողանային փորձել իրանց նոր չմուշկները:

Բայց երբ առաւօտը զարթնեցին, տեսան որ անձրև էր գալիս և եղած սառուցն էլ հալվել էր: Ի հարկէ ոչ մէկն էլ ուրախ չէր դրա համար

Նրանցից մեծը Ալֆրեդը ասաց. «Հոգս մի անիլ, Պետր, դա օգուտ չունի: Վառարանի առջև նստենք և մեզ համար գիր կարգանք»:

Եւ նա առաւ պահարանից մի գեղեցիկ գիրք, նստեց բազկաթոռի վրա, սկսեց կարդալ գիրքը, և սա այնքան բաւականութիւն պատճառեց նրան, որ բոլորովին մոռացաւ անձրևը:

Նրա եղբայր Պետրը չէր ուզում հետեւի նրա օրինակին: Տհաճութեամբ ասաց նա. «Ես չեմ հետաքրքրվում գեղեցիկ գրքերով, բաւական է ինչ որ դպրոցում կարդում ենք: Ես շատ ուզում եմ այսօր սառուցի վրա սահել: Անտանելի է, հէնց այսօր էր փայտել որ անձրև գար»:

Այս ասելով նա կանգնեց պատուհանի առջև ձեռքերը դրանում դրած ու երեսը քացախի պէս թթուացրած: Նա զայրացել էր անձրևի վրա: Խեղճ տղայ. նրա օրը շատ տխուր անցաւ: Նա անբաւական էր և այդ անբաւականութիւնը զրկեց նրան ուրախութիւնից: Բայց նրա եղբայր Ալֆրեդը գոհ և բաւական էր եղածով, ուրախ էր ու բաղդաւոր:

Անբաւական եղեգնատարեկի առակը:

Եղեգնատարեկը մի մեծ թռչուն է, որ բընակվում է ճահիճների մէջ, վիզը երկար է և

ոտներն էլ երկար են: Առակը տառամ է որ մի եղեգնասարեկ անբաւական էր իր վիճակից: Նա ձանձրացել էր ճահճի մէջ բնակվելով, գորտեր, օձեր, և ուրիշ սողուններ ուտելով: Եւ կամենում էր փոքրիկ սարեկի պէս ապրել այգիներում, ամեն մարդկանց սիրելին դառնալ:

«Եղեգնասարեկն էլ կարող է փոքրիկ սարեկի պէս գեղեցիկ երգել», ասաց նա մի օր ինքն իրան: «Ես չեմ ցանկանում բոլոր կեանքս անցկացնել եղեգների մէջ և ջերմ ու տենդով հիւանդ լինել: Այս տառամ նա սկսեց թռչել և վազել որքան ուժ ունէր դէպի այգիները: Նա եկաւ մի այգի և խսկոյն սկսեց փոքրիկ սարեկի նման բոյն շինել խնձորի ծառի վրա: Հետեւեալ օրը երբ նա զբաղուած էր այդ գործով, այգեպանը իր խրճիթից նկատեց նրան, առաւ հրացանը և արձակեց: Գնտաղը նրան չը սպանեց, այլ միայն թեր վիրաւորեց: Եւ նա ուրախ էր որ կարող էր ցատկելով ետ դառնալ իր նախկին բնակարանը ճահճի մէջ և ուտել գորտեր ու որդեր առաջվայ պէս: Անբաւականութիւնը խափանել էր նրա բոլոր ուրախութիւնը: Բայց այն օրվայ խրատը ազատեց նրան անբաւականութիւնից և համոզեց նրան, որ Աստուծոյ ընտրած վիճակը նրա համար աւելի լաւ էր, քան թէ որևէ ուրիշ վիճակ, որ ինքը կարող էր իր համար ընտրել:

Գեղեցիկ լինելու արուեստ:

Մենք ամենքս չունենք գեղեցիկ երեսներ, բայց ամենքս կարող ենք զանվել լաւ դրամադրութեան մէջ: Ուրախութիւնը և քաղցրութիւնը շատ աւելի դուրեկան կանէ մեր երեսը, քան թէ ամենամեծ արտաքին գեղեցկութիւնը: Եթէ մենք ամենքի հետ քաղցր և սիրով խօսենք, աւելի ուրախութիւն կը պատճառենք ուրիշներին, քան եթէ մենք ամենագեղեցիկ մարդը լինէինք աշխարհի մէջ:

Ինչ որ է արեգակը դաշտի ծառերի կամ պարտէզի ծաղիկների համար, նոյնն է բաւականութիւնը և քաղցր վարմունքը ընտանիքի համար:

Պէտք է նայել լուսաւոր կողմից, կամ առակը դոյլերի մասին:

«Ինչ թթուած է դէմքդ այսօր», ասեց դոյլը իր ընկերին, երբ երկուսը միասին իջնում էին ջրհորի մէջ: «Ինչպէս թթուած չլինեմ, ինչ օգուտ է ջրով լցվելը. որքան էլ լցված վեր են քաշում մեզ, բայց դարձեալ դատարկ ետ ենք դառնալու»:

«Շատ զարմանում եմ», ասեց միւս դոյլը, «թէ դու ինչպէս ես նայում այդ բանի վրա: Ես նայում եմ բոլորովին հակառակ կողմից: Ես

մտածում եմ. որքան էլ դատարկ գալիս ենք ջրհորը, դարձեալ լցված գնում ենք այս տեղից»։ Տես, սա նշանակում է՝ նայել լուսաւոր կողմից։ Դու էլ եթէ նայես այդ կողմից, նոյնպէս բաւական և ուրախ կլինես։

Ի ն չ պ է ս է ր Վ է ս լ է յ ր :

Այդ նշանաւոր մարդը, որ մեթօդիստ եկեղեցու հիմնադիրն էր, ասում էր. «Ինչպէս որ ես չէի կարող հայհոյել և անիծել, նոյնպէս էլ չեմ կարող տրտնջալ և անբաւական լինել»։ Նրա ամենամտերիմ բարեկամներից մէկը ասեց նրա մահից յետոյ. «Ո՛րքան փորձութիւնների մէջ եղել է նա, բայց ես երբէք չեմ լսել նրա բերանից տրտնջ և չեմ տեսել նրանում անբաւականութիւն։ Անբաւական մարդկանց ներկայութիւնը միշտ ցաւ էր պատճառում նրան։ Մէկ օր նա ասեց. «Երբ մարդիկ ինձ մօտ տըրտնջում և ամեն բանից նեղանում են, կարծես թէ միսս քերթում են։ Ես գիտեմ որ Աստուած նստած է Իր աթոռի վրա և ամեն ինչ կառավարում է։ Քանի որ դա պարզ տեսնում եմ աչքիս առաջ և Աստուծոյ շնորհքն էլ սրտիս մէջ է, ի՞նչպէս բաւական չլինեմ իմ ունեցածով»։ Ի՞նչ մեծ օրհնութիւն կլինէր, եթէ Վէսլէյի օրինակին հետեւէին ամեն քրիստոնեաները։

Մ ի վ հ ա ս ի ր :

Մէկ քրիստոնեա կին որ միշտ այցելում էր չքաւորներին և հիւանդներին, մէկ օր գնաց մի աղքատ որբեայրի կնոջ մօտ, որին լաւ ճանաչում էր։

Այդ որբեայրին քանի որ առողջ էր շատ աշխատում էր՝ լուացք անելով հայթհայթել իր երեխաների ապրուստը։ Քրիստոնեա կինը լսեց որ նա հիւանդացել է և պառկել, այլևս չի կարող աշխատել։ Դրութիւնը շատ վատ էր, որովհետեւ նրանք ապրել էին ամեն օրվայ վաստակածով։ «Այդ պայմաններում որ ես այցելեցի նորան», պատմում է քրիստոնեա կինը, «սպասում էի որ նրանից պիտի լսեմ ցաւալի պատմութիւն, և գտնեմ նրան վհատած և անբաւական դրութիւնում։ Բայց շատ զարմացայ երբ տեսայ նրան ուրախ և զուարթ»։

«Ես յոյս ունեմ, դարձեալ շուտով կը կարողանամ լուացք անել», ասում էր նա ուրախ։ «Իմ ծանօթները որոշել են յետաձգել իրենց լուացքը մինչև որ ես լաւանամ. հիմա շատ չեն ցաւում իմ ոտներս, և ես կարող եմ շուտով վեր կենալ։ Բժիշկը ձրի է այցելում և փող չի առնում, և մեծ աղջիկս ժէննին կարող է պատրաստել կերակուրը, քիչ բան է մեզ պէտք տեսնում էք, տիկին, որ մեր դրութիւնը բոլորովին վատ չէ»։

«Ես շատ զարմացայ», ասում էր քրիստոնեակիրը, «որ նա այդպէս ուրախ էր, քանի որ ես գիտէի նրա մեծ նեղութիւնները: Ես նրան հարցրի թէ ինչպէս է կարողանում նա այնքան դժուարութիւնների մէջ դարձեալ ուրախ և զուարթ լինել»:

«Ես միշտ գտնում եմ մխիթարութիւն Աստուծոյ փառաւոր խոստումներում», պատասխանեց նա, «և ինչ օգուտ ունի վհատելը»:

«Նրա խօսքերը մեծ ազդեցութիւն ունեցան ինձ վրա», ասում էր այցելող կինը: «Դուրանք իմ սրտիս մէջն էին թափանցում: Եւ ոչ մի քարոզ իմ կեանքիս մէջ այնպէս չի ազդել ինձ վրա, ինչպէս չքաւոր կնոջ այդ խօսքը. «Ի՞նչ օգուտ ունի վհատելը»:

Այն ժամանակ ես ինքս մեծ հոգսի մէջ էի և քիչ էր մնացել յուսահատէի: Բայց որբեայրու խօսքը շատ օգնեց և մխիթարեց ինձ: Եւ այն օրվայ սովորած դասը ես երբէք չեմ մոռացել»: Որբեայրու բաւականութիւնը ինչ լու էր թէ իր և թէ ուրիշների համար:

Արեւի գործարանը:

«Ի՞նչ վատ է, հէնց որ ուզում եմ անից դուրս գալ անձրև է գալիս», արտնջում էր փոքրիկ ժէննին: Անտանելի է, ամբողջ օրը

տանը պիտի նստեմ, աստիճանի տխուր օր պիտի լինի»:

«Գուցէ տխուր պիտի լինի, բայց դա բոլորովին քեզանից է կախած», նկատեց հօրեղբայրը:

«Ես ի՞նչ կարող եմ անել», ասաց ժէննին: «Ես շատ ուզում եմ գնալ պարտէզ և ամբողջ օրը խտտի մէջ խաղ անել և ծաղիկներ քաղել. բայց հիմա արև չկայ, պիտի նստեմ տանը ու նայեմ թէ ինչպէս ամբողջ օրը անձրև է գալիս: Շատ ձանձրալի պիտի լինի»:

«Բայց մենք ինքներս կարող էինք փոքր ինչ արև շինել», նկատեց հօրեղբայր Յակոբը:

«Արև չիսէլ», կրկնեց ժէննին, «ի՞նչ է խօսում հօրեղբայրը»: Եւ նա չը կարողացաւ իր ծիծաղը պահել, թէև մի կողմից լացում էր: «Մի՞թէ հօրեղբայրը արևի գործարան ունի»:

«Այո, իսկոյն կը հիմնեմ գործարանը, եթէ դու էլ ինձ հետ ընկեր դառնաս», պատասխանեց հօրեղբայրը:

«Նախ կամենում եմ ես լսել պայմանները արև շինելու համար»:

«Առաջինը՝ որ չ'մտածես թէ ինչ պիտի անէիր եթէ եղանակը լու լինէր»:

«Երկրորդը՝ որ տեսնես թէ ինչ բաներով կարող էիր տանը դրադել»:

«Երրորդը՝ որ անես ինչ որ ձեռքիցդ գալիս է ուրիշներին բաղդաւորացնելու համար»:

«Վերջի պայմանը անմիջապէս կամենում եմ փորձել», ընդհատեց հօրեղբօրը Ժէննին ու վազեց իր փոքրիկ եղբայր Վիլհէլմի մօտ, որ նստած լաց էր լինում, հանգստացրեց նրան և երեխան կամաց կամաց սկսեց ձի խաղալ աթոռով ու այնպէս ուրախանալ և ծիծաղել, որ Ժէննին ինքն էլ ստիպված էր խնդալ:

«Ես տեսնում եմ որ դու լաւ և հմուտ գործարանատէր ես արևի», ասաց հօրեղբայրը «որովհետև դու պատրաստեցիր ամեն ինչ որ պէտք էր քո եղբայր Վիլհէլմի ու քեզ համար»:

Յետոյ Ժէննին շատ ուրիշ բաներով էլ սկսեց պարապվել և ուրախանալ, և երբ երեկոյեան պիտի քնէր, համբուրեց իր հօրեղբօրը և զգաց որ ինքը շատ աւելի բաղդաւոր էր այն օրը, քան եթէ գնացած լինէր պարտէզը և պարապէր խոտի մէջ խաղ անելով ու ծաղիկներ քաղելով: Այն գիշերը երազում տեսաւ նա, որ հօրեղբայրը շինել է մի մեծ տուն և դռան վերայի տախտակի վրա մեծ տառերով գրել.

Արեւի գործարանն ու պահպանում է հօրեղբայր Յակոբին և փոքրիկ Ժէննին:

Երբ Ժէննին առաւօտեան պաամեց երազը, հօրեղբայրը շատ ծիծաղեց և Ժէննին երբէք չը

մոռացաւ ինչ որ մենք ամենքս էլ միշտ պիտի յիշենք, որ իրանց լիճակով դո՛ւ լինող մանուկները ու մեծերը արև ունեն հէնց իրանց ներսում:

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ և ԱՆՁՆՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ:

Երկու փոքրիկ տղաներ կային, մէկի անունը Յակոբոս էր, իսկ միւսինը Վիլլիամ: Մի օր երբ նրանք մեկնում էին դպրոց, նրանց հայրը տվեց իւրաքանչիւրին երեք կոպէկ փող, ծախսելու իրանց համար: Փոքրիկ գոյգը շատ ուրախ էր այս բանի համար, նրանք շարունակեցին գնալ այնպէս ուրախ ինչպէս ծղրիղները:

«Ի՞նչ ես գնելու Վիլլիամ», ասաց Յակոբոսը մի քիչ գնալուց յետոյ:

«Ես չը գիտեմ», պատասխանեց Վիլլիամը. «ես դեռ չեմ մտածել, ապա դու ի՞նչ ես գնելու»:

«Ասեմ քեզ. դու գիտես որ մայրիկը հիւանդ է, կարծում եմ լաւ կը լինի եթէ ես մի նարինջ առնեմ նրա համար, անշուշտ նա շատ կ'ուրախանայ»:

«Եթէ կ'ուզես այդպէս արա», ասաց Վիլլիամը, «բայց ես գնելու եմ մի բան ինձ համար: Հայրիկը տուել է փողը որպէսզի ծախսեմ ինձ համար: Եթէ մայրիկը կամենում է նարինջ,

հայրերը տւել է նրան փող և ամեն ինչ որ նա ուզէ Աննան գնում է նրա համար»:

«Ես գիտեմ այդ», ասաց Յակոբոսը, «բայց ես ուրախ կ'լինեմ տեսնել որ նա ուտում է իմ փողով գնած նարինջը: Մայրիկը միշտ մեզ համար առնում է բաներ և ես ուզում եմ ցոյց տալ որ չեմ մոռացել նրա ինձ տրած բարիքները»:

«Արա ինչպէս ուզում ես», ասաց Վիլլիամը, «բայց ես գնում եմ քաղցրեղէն առնելու»:

Անմիջապէս նրանք եկան նպարավաճառի խանութը: Վիլլիամը տուեց իր երեք կոպէկը քաղցրաւենիի, — բայց Յակոբոսը գնեց մի գեղեցիկ նարինջ: Երբ որ կէսօրին առն վերադարձան, նա գնաց իր մօր սենեակը և ասաց. «Տես, մայրիկ, ինչ գեղեցիկ նարինջ եմ բերել քեզ համար»:

«Իրաւ որ գեղեցիկ է, որդեակս, շատ ախորժելի կ'լինի ինձ, օրօրեղից է»:


«Հայրիկը այս առաւօտ տուեց ինձ երեք կոպէկ և ես նրանով գնեցի»:

«Սիրելի տղաս, դու շատ բարի ես, որ մտածում ես քո հիւանդ մօր մասին, և չը ծախսեցիր փողդ շաքարահացի կամ քաղցրաւենիի, այլ գնեցիր ինձ համար մի նարինջ: Մայրիկը սիրում է քեզ և քո անձնուրացութեանդ հա-

մար»: Այս ասելով մայրը գրկեց և համբուրեց նրան:

Տեսնում էք սիրելի մանուկներ, ինչպէս Վիլլիամը չը կարողացաւ զսպել իրան, չը մտածեց որ իր մայրը հիւանդ է, այլ միայն իր համար մտածեց: Բայց Յակոբոսը շատ ուրախացրեց իր մօր սիրտը, նա իր փողը չը ծախսեց այս ու այն բանի համար, այլ գնեց նարինջ իր մօր համար: Դուք էլ սիրելիներս հետեւեցէք Յակոբոսի օրինակին և Աստուած կը օրհնէ ձեզ:

Թարգմանեց Սեպուհ:



Գ Ի Ն Ն Է 3 Կ Ո Պ Է Կ.

«Ազգային գրադարան»



NL0029526

